ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՇԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОЖОГОВ И ДЕРМАТОЛОГИИ» МЗ РА
«NATIONAL CENTER FOR BURNS AND DERMATOLOGY» OF MOH OF RA CJSC

07.03.25 N ԱՄԱԿ-Ե/24-2025

ՄԱՔՍ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՍՊԸ-ի
Տնօրեն Անահիտ Եփրեմյան
Հայաստան, Կոտայք, Ջրվեժ, Կվարտալ Մայակի, 8

ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲ Ընկերության և «ՄԱՔՍ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ» ՍՊ Ընկերության միջև 14/11/2024 թվականին կնքված ԱՄԱԿ-ԷԱՃԾՁԲ-25/05 գնման պայմանագիր, որի շրջանակում «ՄԱՔՍ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ» ՍՊԸ-ն պարտավոր էր կնքել համաձայնագիր ֆինանսական միջոցների մասին:

«ՄԱՔՍ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին՝ max.drycleaning2015@gmail.com 10.02.2025թ. ուղարկվել է ծանուցում, առ այն որ ֆինանսական միջոցները նախատեսվել են և անհրաժեշտ է կնքել համաձայնագիրը: Սակայն կազմակերպությունը 15 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել համաձայնագիրը և չի ուղարկել այն Պատվիրատուին:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ «ՄԱՔՍ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ» ՍՊԸ-ն պարտավոր է այս ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում Ամերիաբանկ ՓԲԸ-ի 1570090592110100 հաշվեհամարին փոխանցել 300,000,00 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ պայմանագրի ապահովման և 450,000,00 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները: Վճարման կտրոնի բնօրինակները պետք է ներկայացվեն ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ՝ Ֆուչիկի 32 մասնաշենք, 2-րդ հարկ, սենյակ՝ մինչև 2025 թվականի մարտի 14-ը ներառյալ:

25a Davtashen, Yerevan 0054 - Երեւան 0054, Դավթաշեն 25ա - 0054, г.Ереван, Давташен 25а
հեռ. (+37410)-342710 dermasticos@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՇԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОЖОГОВ И ДЕРМАТОЛОГИИ» МЗ РА
«NATIONAL CENTER FOR BURNS AND DERMATOLOGY» OF MOH OF RA CJSC

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ներառվում է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում, եթե նա խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի ընթացքում ստանձնած պարտավորությունները, որոնք հանգեցրել են պայմանագրի միակողմանի լուծմանը կամ նրա հետագա մասնակցության դադարեցմանը՝ երբ մասնակիցը, հրավերի կամ պայմանագրով նախատեսված ժամկետում, չի կատարել հայտի, պայմանագրի կամ որակավորման ապահովման համար նախատեսված վճարումները:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները Ձեր կողմից չվճարվելու դեպքում ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն կձեռնարկի համապատասխան միջոցներ դրանք գանձելու ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

25a Davtashen, Yerevan 0054 - Երեւան 0054, Դավթաշեն 25ա - 0054, г.Ереван, Давташен 25а
հեռ. (+37410)-342710 dermasticos@gmail.com